եւ եղել է պարզ քնարերգու, սակա՛ւ է երգել հանրային մոտիւներ։

Միակողմանի քննադատութիւնը եւ հրապարակագրութիւնը յանցանքի մէջ բաժին ունին դրանում։ Դրանց տիպիկ ներկայացուցիչն է եղել մեղնում Լէօն։ Իր «Ռուսահայոց Գրականութիւնը» աշխատութեան մէջ, օրինակ, նա միայն մի քանի տող է նուիրել Յովհ. Յովհաննիսեանին, սակաւարժէք համարելով նրա ստեղծագործութիւնը, ինչ է թէ՝ վարդ ու դարուն, սէր ու վիշտ է երգել բանաստեղծը, չի արտայայտել հանրային տրամադրութիւններ։ Իսկ անդին՝ նոյն Լէօն էջեր է նուիրել մի Լեոնցի, որովհետեւ նա հակառակ ուղղութեամբ է տոգորուած. ոչի՛նչ, եթէ բանաստեղծութեան հետքն անգամ չկայ նրա՝ ոտանաւորով գրուած՝ այդ հրապարակագրութեանց մէջ։ Յովհ. Թումանեանի նման մի տաղանդն անգամ՝ շատ աւելի լաւ գնահատութիւն չէ գտել ժամանակին, նոյն հրապարակագիր-քննադատների կողմից։ Թէեւ տարբեր նշանաբաններով ու անուններով, իրականին մէջ բոլշեւիկ քննադատութիւնը եւս ունի նոյն տեսակէտը։

Յովհաննէս Յովհաննիսեան իր տաղանդով բաւական յետ է մնում, իմ կարծիքով, իր կրտսեր ժամանակակից բանաստեղծներ Յովհաննէս Թումանեանից եւ Աւետիք Իսահակեանից, որոնց հետ միասին նա մի տեսակ եռաստղ է կազմում 90-ական թուականների արեւելահայ գրական երկնակամարի վրայ։ Վերջին երկուսը ո՛չ միայն աւելի խորը, այլ եւ բազմակողմանի տաղանդի տէր են։ Նրանք չափածոյի հետ միասին արտադրել են նաեւ արձակ էջեր։ Բայց եւ այնպէս, Յովհաննիսեանին է պատկանում աւագութիւնը, ժամանակագրական տեսակէտով, որպէս քնարերգակ բանաստեղծ։ Ժողովրդական տարրը եւս, որ այնչափ շնորհալի կերպով մշակել են Թումանեան եւ Իսահակեան, դարձեալ Յովհաննիսեանի կողմից է ուշադրութեան արժանացել ակզբնապէս։ Բայց, ի հարկէ, սէրը եւ վիշտը գերակշռող տեղ են գրաւում Յովհաննիսեանի մօտ, որպէս զուտ քնարերգակի։

Իր երիտասարդական տարիների ստեղծագործութեան շարքին են պատկանում, գլխաւորապէս, Յովհաննիսեանի սիրոյ երգերը։ Այդ կարգի ոտանաւորների թւում տիպիք է նրա՝ ծանօթ, շատ տարածուած ու երգ դարդած «Ա՛խ, տուէ՛ք ինձ մի քաղցր քուն»ը, որ միեւնոյն ժամանակ արտայայտութիւն է հասարակական տրամադրութիւնների անկման եւ ինքնամփոփման ճիգի՝ սեփական եսի, սեփական զգացումների աշխարհում։ Բանաստեղծի փափաքն է՝ «այս կեանքից հեռո՛ւ սլանալ», ընկղմուիլ «քաղցր քունի» մէջ, սաւառնիլ դէպի

Այն աշխարհը, ուր խնդութիւն,
Ուր սէրն է միշտ անթառամ։

Իր շրջապատից ճանձրացած, հասարակական իտէալներից յուսախաբ՝ բանաստեղծը անձնական վայելքի մէջ է մոռացութիւն որոնում,— այնտեղ, ուր վարդերն իրեն բարձ լինել կարող են, իր վերմակը՝ կանաչից, ուր նա կարող է անվերջ եւ անյագօրէն ծծել նրանց զուարթագին բոյրը, ուր իր առաջ անուշ վտակը կը խոխոջէ խայտալով, չորս բոլորտիքը եղեմային թարմութիւն տարածելով, ուր՝ դարնան մատաղ արեգակը կը ժպտի արշալուսին, դիշերներն էլ գողտրիկ, վառ լուսնակը՝ կը խաղայ բանաստեղծի ճակատին։ Այդ ամէնի հետ միասին՝

Եւ աչագեղ կոյսն ականջիս
Իւր մեղեդին մեղմ հնչէ,
Եւ հերարձակ՝ սիրով վզիս
Փարէ քնքուշ, փաղաքշէ...

Եւ այսպէս՝ շարունակ, միշտ եւ անընդհատ.

Եւ յաւիտեան վայելչութիւն
Գրկէ հոգիս, չյագենամ...
Ա՛խ, տուէ՛ք ինձ քաղցր մի քուն,
Հեռո՛ւ, հեռո՛ւ սլանամ։

Նոյն այդ տրամադրութիւնները արտայայտուած ենք գտնում նաեւ բանաստեղծի «Մ-ին», այլ եւ մի շարք ուրիշ ոտանաւորներում։

Եւ սակայն, անցնում են տարիներ, անցնում է բանաստեղծի պատանեկան, վառ երազներով լի կեանքը ու դրա հետ մէկտեղ յօդս են ցնդում այդ երազները, բանաստեղծի անհատական սէրն ու երջանկութիւնը։ Գարունին յաջորդում է աշունը, եւ բանաստեղծը անցած